Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-357-22.08.2022-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 28-րդ հոդվածում.

1. 1-ին պարբերությունում «պետական» բառից հետո լրացնել «կամ համայնքային» բառերը,

1) 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը ճանաչել ուժը կորցրած,

2) լրացնել նոր պարբերությամբ.

«Բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքը: Սույն հոդվածի իմաստով՝ անձը հանդիսանում է բարեխիղճ, եթե չգիտեր և չէր կարող իմանալ, որ իր կողմից այլ անձի հանձնված գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել որպես վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 162-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 162. Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը**

1. Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում

օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածում.

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

2. 18-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Երևան համայնքի վարչական տարածքում առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջածախ առևտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 4. Օրենսգրքի 310-րդ հոդվածում.

1. 1-ին պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով նախատեսված է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, ապա այն ենթակա է առգրավման:»

2. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան առգրավելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, իսկ սույն օրենսգրքի 123.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 140-րդ հոդվածի 5-րդ մասով, 162-րդ հոդվածով, 169.16-րդ հոդվածի 3-րդ և 18-րդ մասերով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում օրենքով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ վարչական կամ դատական կարգով բողոք չներկայացնելու, իսկ բողոքարկման դեպքում բողոքի մերժումից հետո՝ երեսնօրյա ժամկետում, համապատասխան մարմինը դիմում է դատարան՝ առգրավված առարկան բռնագրավելու պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան դատարան դիմելու պահին այլևս գոյություն չունի:

3. 3-րդ պարբերությունում «իրավախախտում հանդիսացող» բառերը փոխարինել «իրավախախտում կատարելու» բառերով:

4. վերջին պարբերությունից հետո լրացնել նոր՝ 14-րդ պարբերություն.

«տեղական ինքնակառավարման մարմինների՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 162-րդ և 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում:»:

Հոդված 5. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «պետության» բառից հետո լրացնել «կամ համայնքի» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1.- 1985 թվականի դեկտեմբերի 6-ի ~~Վարչական~~վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 28-րդ հոդվածում.

1. 1-ին պարբերությունում «պետական» բառից հետո լրացնել «կամ համայնքային» բառերը,

2. ~~2.~~ 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը ~~հանել~~ճանաչել ուժը կորցրած,

3. ~~3.~~ լրացնել նոր ~~պարբերություն~~պարբերությամբ.

«Բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքը~~։~~: Սույն հոդվածի իմաստով՝ անձը հանդիսանում է բարեխիղճ, եթե չգիտեր եւ չէր կարող իմանալ, որ իր կողմից այլ անձի հանձնված գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել որպես վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ~~։»։~~:»:

Հոդված 2~~.~~. Օրենսգրքի 162~~-~~-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ~~.~~.

«**Հոդված 162. Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ** *առեւտուր* **իրականացնելը կամ ծառայություն մատուցելը**

1. Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առեւտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով՝ առեւտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

~~2.~~ Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առեւտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածում.

1.

2. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Առանց թույլտվության բացօթյա առեւտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ յոթանասունապատիկի չափով՝ առեւտրի ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչեւ հարյուրտասնապատիկի չափով՝ առեւտրի ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

2. 18-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Երեւան համայնքի վարչական տարածքում առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջածախ առեւտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ առեւտրի ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

Սույնատարածքնակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ույնատարածքնակում՝ , ույնատարածքնակ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առեւտրի ընթացքում օգտագործվող եւ իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 4. Օրենսգրքի 310-րդ հոդվածում.

5. 1-ին պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով նախատեսված է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, ապա այն ենթակա է առգրավման:»

2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Վարչական իրավախախտում հանդիսացող կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան առգրավելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, իսկ սույն օրենսգրքի 123.1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 140-րդ հոդվածի 5-րդ մասով, 162-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով հոդվածով, 169.16-րդ հոդվածի 3-րդ եւ 18-րդ մասերով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում օրենքով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ վարչական կամ դատական կարգով բողոք չներկայացնելու, իսկ բողոքարկման դեպքում բողոքի մերժումից հետո՝ երեսնօրյա ժամկետում, համապատասխան մարմինը դիմում է դատարան՝ առգրավված առարկան բռնագրավելու պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան դատարան դիմելու պահին այլեւս գոյություն չունի:»:

6. 2.3-րդ պարբերությունում «իրավախախտում հանդիսացող» բառերը փոխարինել «իրավախախտում կատարելու» բառերով:

7. վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ 14-րդ պարբերություն.

«տեղական ինքնակառավարման մարմինների՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 162-րդ եւ 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում:»:»:

Հոդված 5.-. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «պետության» բառից հետո լրացնել «կամ համայնքի» բառերը÷:

Հոդված 6.- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-357-22.08.2022-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»					
1.	Կառավարություն	Հոդված 1-ին	1. «Վարչական» բառը գրել փոքրատառով՝ «վարչական»: 2. ա) 1-ին հոդվածով լրացվող 1-ին կետից հետո կետերի համարակալումը առաջարկում ենք փոխել՝ դարձնելով 1-ին կետի ենթակետեր՝ «2.» և «3.» թվերը համապատասխանաբար դարձնելով՝ «1)» և «2)» ենթակետեր,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բ) «2»-րդ խմբագրված «1»-ին ենթակետում «հանել» բառի փոխարեն լրացնել «ճանաչել ուժը կորցրած» բառերը, գ) «3»-րդ խմբագրված «2»-րդ ենթակետում «պարբերություն» բառի փոխարեն լրացնել «պարբերությամբ» բառը:		
2.	Կառավարություն	Հոդված 4-րդ	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը հստակեցնել՝ սահմանելով, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 310-րդ հոդվածի ո՞ր հատվածում է նախատեսվում լրացում կատարել, ինչպես նաև 2-րդ պարբերությունը նոր խմբագրությամբ շարադրելիս «իրավախախտում հանդիսացող» բառերը փոխարինել «իրավախախտում կատարելու» բառերով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենսգրքով, որպես վարչական տույժի տեսակ սահմանված է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնա- գրավումը: Սույն առաջարկը վերաբերելի է նաեւ Օրենսգրքի 310-րդ հոդվածում կիրառված «վարչական իրավա- խախտում հանդիսացող գոր- ծիք» բառերին:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հաշվի առնելով վերոգրյալը կատարվել են հետևյալ փոփոխությունները՝ **1.** 4-րդ հոդվածը լրացվել է նոր 1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «1. 1-ին պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե վարչական իրավախախտ- ման համար սույն օրենսգրքով նախատեսված է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնա- գրավում, ապա այն ենթակա է առգրավման:»:» **Ըստ այդմ մասերի համարակալումը փոխվել է:** **2.** 1-ին լրամշակված 2-րդ մասում՝ ա) «Վարչական իրավախախտում» բառերից հետո՝ «հանդիսացող» բառի փոխարեն լրացնել «կատարելու» բառը, բ) «162-րդ» բառերից հետո գրված «հոդվածի 1-ին և 2-րդ մասերով» բառերի փոխարեն լրացնել «հոդվածով» բառը,		

			3. 1-ին՝ լրամշակված 2-րդ մասից հետո լրացնել նոր՝ «3.»-րդ և «4.» -րդ մասեր՝ հետևյալ բովանդակու- թյամբ. «3. 3-րդ պարբերությունում «իրավախախտում հանդիսացող» բառերը փոխարինել «իրավա- խախտում կատարելու» բառերով: **4.** վերջին պարբերությունից հետո լրացնել նոր՝ 14-րդ պարբերությամբ. «տեղական ինքնակառավարման մարմինների՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 162-րդ և 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում:»:»		
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1.	Կառավարություն	1-ին հոդվածով լրացվող Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող նոր «14»-րդ կետ	**«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում համայնքի ղեկավարի կողմից շրջածախ առեւտրի իրականացման համար թույլտվություն տալու վերաբերյալ որեւէ կարգավորում սահմանված չէ՝ հետևաբար, առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող «14»-րդ կետի 1-ին նախադասությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝** «14) Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների	Ընդունվել է	Ընդունվել է:

			խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կամ առանց համապատասխան թույլտվության իրականացված բացօթյա առևտրի դեպքում իրականացնում է առևտրի իրականացման և ծառայություն- ների մատուցման առարկաների առգրավում:»:		